

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ը հրավիրում է գույքի վարձակալության աճուրդի, որը տեղի կունենա 2024թ.Նոյեմբերի 1-ին, ժամը՝ 14:30-ին ք.ԵՐԵՎԱՆ, ԶԱՔԻՅԱՆ 10 ՀԱՍՑԵՆՈՒՄ հայտերի ընդունման վերջնաժամկետն է՝ 2024թ. հոկտեմբերի 31-ին, ժամը՝ 13:00-ին

ԱՃՈՐԴՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ Է ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2024թ.հոկտեմբերի 10-ի թիվ 327-Ա հրամանով «ԵՐԵՎԱՆԻ ԳՐ. ՆԱՐԵԿԱՑՈՒ ԱՆՎԱՆ Հ. 137 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված տարածքը

Հ/Հ	Լոտի հերթական համարը	Գույքի (լոտի) անվանումը	Հասցե	Հարկը	Մակերեսը /քառ. մետր/	Իրավունքի տեսակը, գործողության ժամկետը և այլ պայմաններ	Մեկ ամսվա վարձավճարի մեկնարկային գինը /ՀՀ դրամ/	Նախավճարը /ՀՀ դրամ/	Մասնակցության վճար /ՀՀ դրամ/
1	1	Տարածք	ք. Երևան, Շենգավիթ Սողոմոն Տարոնց փողոց 17	1-ին	16.8 ք.մ.	Սննդի կազմակերպման նպատակով (բուֆետ) շաբաթական հինգ օր երկուշաբթիից - ուրբաթ ժամը՝ 9.00-14.30, 1 (մեկ) տարի ժամկետով բացառությամբ հունիս, հուլիս, օգոստոս ամիսների	18 700	18 700	15 000

* Աճուրդի կազմակերպչի անվանումը, գտնվելու վայրը՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ (հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10):

* Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

* Աճուրդի մասնակիցները ոչ բնակելի տարածքին կարող են ծանոթանալ հրապարակման ծանուցման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը ընկած ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, այցելելով վերը նշված հասցե:

Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում աճուրդի ներկայացված լոտի (լոտեր) որակի համար: Աճուրդում գործում է հետևյալ սկզբունքը՝ «աճուրդի մասնակիցը «տեսել-համաձայնել է»:

Աճուրդի մասնակցության հայտերի ներկայացնելը և պայմանները՝

* Գույքի վարձակալության աճուրդին կարող են մասնակցել հայտ ներկայացնողները, որոնք սահմանված ժամկետում կազմակերպչին են ներկայացրել աճուրդի մասնակցության հայտ (հայտի ձևը ներկայացված է)՝ աճուրդի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերով:

Աճուրդի մասնակցության հայտին կից անհրաժեշտ փաստաթղթերն են՝

- նախավճարի վճարումը հաստատող անդորրագիրը (նշելով մասնակցի անունը և ազգանունը), մուտքագրման հաշիվն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության թիվ 900013145272, ստացող՝ ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե, վճարման նպատակը՝ **աճուրդի նախավճար**

- մասնակցության վճարումը հաստատող անդորրագիրը (նշելով մասնակցի անունը և ազգանունը), մուտքագրման հաշիվն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության թիվ 900018002981, ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, վճարման նպատակը՝ **աճուրդի մասնակցության վճար**, մասնակցության վճարը գույքի (լոտի) գնի մեջ չի ներառվում և անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում,

- իրավաբանական անձանց համար՝ գրանցման և հիմնադիր փաստաթղթերի պատճենները, իսկ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ անձնագրի և սոցիալական քարտի պատճենները,

- հայտատուի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագիր (եթե աճուրդին ներկայանում է լիազորված անձը):

Աճուրդի մասնակցության հայտերի ներկայացնելը՝

- Աճուրդի մասնակցության հայտերը՝ աճուրդի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերով, ներկայացվում են անձամբ կամ փոստով՝ պատվիրված նամակով:

- **Աճուրդի մասնակցության հայտերի ընդունումը դադարում է աճուրդի անցկացման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 13:00-ին:**

- Գույքի վարձակալության աճուրդին մասնակցության իրավունք ձեռք բերած սուբյեկտներին (վերը նշված փաստաթղթերի առկայության դեպքում) տրամադրում են մասնակցի տոմս, որում նշված համարով հանդես են գալիս աճուրդում:

- **Գույքի աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակցի չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճարը՝ 2000 ՀՀ դրամ՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության թիվ 900018002981 հաշվեհամարին:**

- Վճարումը հաստատող անդորրագիրը (նշելով վճարման նպատակը՝ դիտորդի տոմսի վճար) և անձնագրի պատճեն ներկայացնել կազմակերպչին՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ՝ ընդհուպ մինչև աճուրդի սկսվելը (հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10):

- Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք աճուրդի անցկացման դահլիճում զբաղեցնում են առանձին նստատեղեր:

- **Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանն ու ենթարկվել աճուրդի կանոնակարգով սահմանված կանոններին:**

Աճուրդի անցկացման և աճուրդում հաղթողին որոշելու կարգը՝

- Աճուրդի մասնակցի **անձնագրի և մասնակցի վկայական(ներ)ի** առկայությունը պարտադիր է, լիազորված անձի դեպքում՝ նաև **լիազորությունները հաստատող փաստաթղթերը:**

- Նախքան աճուրդի սկսվելը՝ աճուրդի կազմակերպիչը գրանցում է մասնակիցներին և յուրաքանչյուր մասնակցին տրամադրում է իրեն տոմսին համապատասխանող քարտ:

- Գույքի վարձակալության աճուրդն անցկացնում է աճուրդավարը, որը հրապարակում է վարձակալության առաջարկվող գույքը բնութագրող ցուցանիշները, գույքի մեկնարկային վարձավճարի չափը,

աճուրդային քայլի չափը, որը սահմանվում է գույքի մեկնարկային վարձավճարի չափի 5 տոկոսից ոչ պակաս չափով:

- Աճուրդի մասնակիցը բարձրացնում է իր տոմսին համապատասխանող համարը, որով տալիս է իր համաձայնությունը հայտարարված արժեքով գույքը վարձակալելու մասին:

- Յուրաքանչյուր մասնակից կարող է գույքի՝ իր կողմից առաջարկվող վարձավճարի չափն ավելացնել մեկ կամ մեկից ավելի քայլերով, կամ քայլի չափից ոչ պակաս գումարով:

- Աճուրդավարը շարունակում է աճուրդն այնքան ժամանակ, քանի դեռ չի մնացել առավելագույն վարձավճարի չափն առաջարկված մեկ թեկնածու, որից հետո աճուրդը դադարեցվում է:

- Գույքի առավելագույն վարձավճարի չափ առաջարկված թեկնածուն աճուրդավարի կողմից երրորդ անգամ առաջարկված վարձավճարի չափը հայտարարվելուց հետո ճանաչվում է աճուրդի հաղթող: Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդի հաղթած մասնակից է համարվում վիճակահանության արդյունքներով ընտրված մասնակիցը:

Աճուրդի մասնակցության, նախավճարի վճարման կարգը, ժամկետները և նախավճարի վերադարձման կարգը՝

- Գույքի վարձակալության աճուրդում հաղթող ճանաչված հայտատուի նախավճարը ներառվում է մասնակցի կողմից առաջարկված վարձավճարի մեջ:

- Աճուրդի արդյունքների ամփոփման մասին արձանագրությունն ստորագրելուց հետո կազմակերպիչը գույքի վարձակալության տրամադրման աճուրդում հաղթող ճանաչված անձին տրամադրում է լուսի գնի վճարման հանձնարարագիր՝ հաղթող անձի առաջարկված երեք ամսվա վարձավճարի և նախավճարի տարբերության չափով, որի հիման վրա վերջինս հանձնարարագրով 3(երեք) **աշխատանքային օրվա ընթացքում** կատարում է վճարում << պետական բյուջեի համապատասխան հաշվին ու վճարման անդորրագիրը ներկայացնում կազմակերպչին:

- Սահմանված ժամկետներում վճարումները չկատարելու դեպքում հաղթող ճանաչված անձի կողմից վճարված նախավճարը չի վերադարձվում՝ աճուրդը համարվում է չկայացած, իսկ վճարված նախավճարը կոմիտեի կողմից փոխանցվում է << պետական բյուջեի համապատասխան հաշվին: Ընդ որում՝ եթե աճուրդը համարվում է չկայացած՝ հաղթող մասնակցի կողմից վճարումները սահմանված ժամկետում չկատարվելու կամ աճուրդային արձանագրությունը չստորագրվելու պատճառով, ապա այդ դեպքերում հաջորդ աճուրդը կազմակերպվում է նույն պայմաններով՝ առանց մեկնարկային գնի նվազման:

- **Աճուրդը կայանալուց կամ չկայացած հայտարարվելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կազմակերպիչը տեղեկություն է տրամադրում Պետական գույքի կառավարման կոմիտե՝**

չհաղթած մասնակիցների վճարած նախավճարները վերջիններիս կողմից ներկայացված բանկային հաշվեհամարներին փոխանցելու համար:

** Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և աճուրդի անցկացման կանոնակարգին ծանոթանալու համար կարող եք դիմել Կազմակերպչին կամ գանգահարել՝ 010-52-63-32, 043-06-07-16*

հեռախոսահամարներով, իսկ աճուրդի անցկացման կանոնակարգին ծանոթանալու համար կարող եք նաև այցելել հեղուկալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143151>:

Ծանուցում.

<< կառավարության 2020թ. հունիսի 4-ի N 914-Ն որոշում.

Գույքի վարձակալության աճուրդի պայմանների փոփոխման դեպքում կազմակերպիչն օրենքով սահմանված կարգով պարտավոր է աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ անհապաղ կապարել համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ այն ձևով, ինչպես կապարվել է գույքի վարձակալության աճուրդի մասին հրապարակային ծանուցումը: Թույլատրվում է հրապարակային ծանուցման փոփոխությամբ կապարել լրացում, եթե դրանով չեն փոփոխվում աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները: Գույքի վարձակալության աճուրդի էական պայմանների փոփոխման դեպքում անհրաժեշտ է կապարել նոր հրապարակային ծանուցում՝ նախկին ծանուցումը չեղյալ հայտարարելով:

Քրեական օրենսգրքի 196 հոդված.

Հրապարակային սակարկությունների անցկացման կարգը չարամտորեն խախտելը, որը խոշոր վնաս է պատճառել գույքի սեփականատիրոջը, սակարկություններ կազմակերպողին, գնորդին կամ այլ տնտեսավարող սուբյեկտին՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

***Ուշադրություն՝ աճուրդի ընթացքը տեսաձայնագրվում է, դրա օրինականությունը ապահովելու նպատակով:**